

ՀՈԶԱԿԱԳԻՐ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Սկստի ունենալով, որ Հայաստանի Համաժողովրդական շարժումը, ձևավորված լինելով որպես նախընտրական միավորում, ավարտել է իր անմիջական դերակատարությունը,

Մեկնելով այն իրողությունից, որ իշխանությունը Հայաստանում վերստին բռնազավթված է հանցավոր վարչախմբի կողմից, եւ որ ընտրակեղծիքներն այս անգամ ուղեկցվել են ժողովրդի դեմ իրագործված բիրտ ոճրագործությամբ,

Հաշվի առնելով, որ ետընտրական շրջանում Հայաստանի Հանրապետությունը հայտնվել է մտահոգիչ մարտահրավերների առջեւ,

Գիտակցելով, որ հրատապ անհրաժեշտություն է առաջացել կազմակերպական նոր ձևի միջոցով Շարժումը հարմարեցնելու այդ մարտահրավերների դիմագրավմանը,

Մենք՝ Շարժման կորիզը կազմող քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներս, հռչակում ենք Հայ Ազգային Կոնգրեսի ստեղծումը:

Մեզ միավորում է սահմանադրական կարգի հաստատման՝ ազատ, ժողովրդավարական, իրավական, բարգավաճ պետության կերտման եւ լիարժեք քաղաքացիական հասարակության ձևավորման գաղափարը:

Կոնգրեսի մաս կազմող քաղաքական կուսակցություններն ու հասարակական կազմակերպությունները պահպանում են իրենց լիակատար ինքնուրույնությունը եւ անկախ գործունեություն ծավալելու, այդ թվում՝ ընտրություններին առանձին մասնակցելու իրավունքը: Կոնգրեսը բաց է Հայաստանի եւ Սփյուռքի բոլոր կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների անդամագրման համար:

Կոնգրեսի գործունեության ընդարձակ ծրագիրը նախատեսվում է ընդունել եւ հրապարակել նրա առաջիկա համաժողովում: Մինչ այդ, սակայն, հարկ ենք համարում Հայաստանի հասարակությանը ներկայացնել երկրի բարդ ներքաղաքական իրավիճակից թելադրված մեր ընթացիկ խնդիրները.

Անխտիր բոլոր քաղբանտարկյալների անհապաղ ազատ արձակում.

Խոսքի, մամուլի, հավաքների ազատության ապահովում.

Միջազգային փորձագետների նշանակալի մասնակցությամբ մարտի 1-ի ոճրագործության իրապես անկախ հետաքննության իրականացում.

Առվազն առաջին պայմանի կատարման դեպքում՝ երկրի ժողովրդավարական զարգացմանն ուղղված բարեփոխումների շուրջ իշխանությունների հետ երկխոսության ծավալում.

Արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների անցկացում:

Հայրենիքի ճակատագրով մտահոգված բոլոր ուժերին, կազմակերպություններին եւ քաղաքացիներին կոչ ենք անում ստվար շարքերով անդամագրվել Հայ Ազգային Կոնգրեսին: